

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 255-Ա

20 օգոստոսի, 2020 թվական

**ՄԻ ՇԱՐՔ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) 2-րդ, 6-րդ, 7-րդ կետերով և Որոշման հավելվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) ղեկավարի՝ 2020 թվականի մայիսի 15-ի թիվ 40-Ա հրամանի հիման վրա իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ կանոնավոր ուղևորափոխադրում իրականացնող ընկերությունների կողմից սպասարկվող երթուղիները սպասարկող ավտոտրանսպորտային միջոցների շահագործումը՝

1) «Բերլոլկ» ՍՊԸ՝ թիվ 75ա միկրոավտոբուսային երթուղի՝ 1045S, 4957S, 2671S, 1928S հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցներ,

2) «Սաքխաչ» ՍՊԸ՝ թիվ 58 ավտոբուսային երթուղի՝ 0647S, 4338S, 4328S, 4329S հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցներ,


3) «Երևանի ավտոբուս» ՓԲԸ՝ թիվ 33 ավտոբուսային երթուղի՝ 4431S, 4578S հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցներ:


2. Տեսչական մարմնի ղեկավար Գեղամ Շախբազյանին՝ ապահովել վերոնշյալ ընկերությունների սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Ավտոտրանսպորտային միջոցների շահագործումը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողություն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 20/08/20 18:36:52 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ